

ԵՐՈՊԱՅԻ ՄԷՋ ՄՐՑԱՆՇԱՅԻՆ ՏՕԹ

Երոպական կլիմայական ծառայության կեղորմը նոր զեկոյցի մը մէջ յայտարարեց, թէ 2026-ի Յունիս ամիսը դարձած է արեւմտեան Եւրոպայի մէջ կլիմայական դիտարկումներու ամբողջ պատմութեան ամենատաք Յունիսը, իսկ համաշխարհային առումով երկրորդը: Սաստիկ տօթը բարձրացուցած է նաեւ մահացութեան թիւերը եւրոպական զանազան երկիրներու մէջ, նաեւ զգալի ազդեցութիւն ձգած է Եւրոպայի արեւելեան հատուածին եւ Միջին Արեւելքի վրայ՝ ներառեալ Լիբանանը:

ԱՌԻՆ. «ՊԻՏԻ ԶԵՐԱԺԱՐԻՄ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆՏՐԱՆՔԷՆ»

Հանրապետութեան նախագահ ժողէֆ Աուն Պապատայի պալատին մէջ ընդունեց Լիբանանեան ուժեր կուսակցութեան նախագահ Սամիր ժաաժաիի գլխաւորած պատուիրակութիւնը, որուն հետ քննարկեց Լիբանանեան ու տարածաշրջանային նորագոյն զարգացումները: Աուն վերահաստատեց, որ պիտի չհրաժարի Իսրայէլին հետ բանակցելու որոշումէն, աւելցնելով որ իր բոլոր կեցածքներուն մասին պարզաբանումներ պիտի ներկայացնէ Լիբանանցիներուն, որպէսզի իմանան, թէ ինչպէս կ'ընթանայ



բանակցային հոլովոյթը եւ Լիբանան կառնած կը մնայ իր իրաւունքներուն: Աունի համաձայն, բանակցելու որոշումին վերաբերեալ քննադատութիւնները նոյնիսկ արժանի չեն հակադարձութեան, որովհետեւ Լիբանան 1949-էն ի վեր քակի մը անգամ բանակցած է Իսրայէլի հետ:

Նախագահ Աուն այցելեց Նախկին նախագահ Միշէլ Սէլմանի բնակարանը եւ քննարկեց քաղաքական եւ ապահովական նորագոյն զարգացումները: Սէլման ապա յայտնեց, որ խօսած են Աունի Ուաշինկթըն կատարելիք այցելութեան եւ ամերիկացի նախագահին հետ սպասուած քննարկումներուն մասին: «Նախագահ Աուն յանձնառու է ազատագրելու Լիբանանը եւ մեր քաղաքացիներուն տահուգութիւնները պիտի փոխանցէ ամերիկացի պաշտօնատարներուն», ըսաւ Սէլման:

Իսկ Լիբանանեան բանակի հրամանատար զօրավար Ռուսուֆ Յայջալ Շարքի իր գրասենեակին մէջ ընդունեց Պէյրութի մէջ Սեւտական Արաբիոյ նորանշանակ ղեսպան



Ֆահրտ պըն Ապտ Էլ-Ռահման Էլ-Տոսարին, որուն հետ քննարկեց Լիբանանի դիմագրուած ապահովական զարգացումները, ինչպէս նաեւ Պէյրութ-Ռիատ եղբայրական յարաբերութիւնները: Հրամանատարը ղեսպանին հետ խօսեցաւ Լիբանանեան եւ սեւտական բանակներուն միջեւ համագործակցութիւնը աւելի խորացնելու միջոցներուն մասին:

ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՆՈՐԱԳՈՅՆ ԹԻԵՐՈՎ

Առողջապահութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ 2 Մարտին պատերազմի վերաբնկումէն իվեր Լիբանանի մէջ մահացած է առնուազն 4321 մարդ, վիրաւորուած՝ 12.207 ուրիշներ:

Եւեմուտքի նախարար Եասին ժապեր այցելեց Նապաթի, ուր ծանօթացաւ իսրայէլեան յարձակումներու հետեւանքներուն: Հարաւի խորհուրդի նախագահ Հաշմ Հայտարի ընկերակցութեամբ կատարած շրջագայութեան ընթացքին ժապեր յայտնեց, որ Նապաթի ժամանած է գետնի վրայ ծանօթանալու համար պատերազմի հետեւանքներուն եւ վերակառուցումի յանձնառութիւն յայտնելու քաղաքացիներուն: Իսկ երկրագործութեան նախարար Նիզար Հանի նոյն զաւառին մէջ ծանօթացաւ պատերազմին ձգած երկրագործական վնասներուն: Ոլորտի պատասխանատուներուն եւ հողագործներուն հետ կատարած քննարկումներէն ետք Հանի յայտնեց, որ երկրագործական ոլորտը պատերազմին պատճառով կրած է առնուազն մէկ միլիառ տոլարի վնաս:

TRIPP-ԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՀԱՐԿՈՒՄՆԵՐ

2025-ի Օգոստոսին Ուաշինկթընի մէջ նախաստորագրուած հայ-ատրպէյճանական համաձայնագրին գլխաւոր կետերէն մէկը՝ հաղորդակցութիւններու աշխուժացումի TRIPP նախագիծը, կը շարունակէ ենթարկուիլ ատրպէյճանական շահարկումներու: Արտաքին գործերու նախարար Ժէյհուն Պայրամով յայտնեց, որ Պաքու տեղեկացուած է Հայաստանի մէջ այս նախագիծին ուղղութեամբ աշխատանքներու ընթացքին մասին: Ան պնդեց, որ TRIPP-ը խորքին մէջ «Զանգեզուրի միջանցքն է, որուն մուտքն ու ելքը պիտի գտնուին Ատրպէյճանի տարածքին մէջ»: Անոր համաձայն, Միացեալ Նահանգներ կը մասնակցի այս հոլովոյթին: Հայաստանի Արտաքին գործերու նախարարութիւնը հակադարձեց Պաքուի յայտարարութեան ու շեշտեց, որ TRIPP նախագիծը իմնուած է հայ-ամերիկեան Մայիսին ստորագրուած համաձայնագրին վրայ ու կը վերաբերի միայն Հայաստանի տարածքին եւ այդ առումով խորհրդակցութիւնները կը շարունակուին հայ եւ ամերիկացի պաշտօնատարներուն միջեւ:

ՎՃԱՐՈՒՄ ԵՒ ՏԱՐԱՆՑՈՒՄ

Հայաստանի քաղաքացիական օդային փոխադրութեան վարչութիւնը յայտարարեց, որ ատրպէյճանական օդանավային ընկերութիւնները 2025-ի Հայաստանի օդային տարածքէն անցնելու համար վճարած են 434 հազար 31 եւրօ: Ատրպէյճանի երկաթուղիներու ընկերութիւնը յայտարարեց, թէ երէկ Ատրպէյճանի վրայով Ռուսիայէն Հայաստան փոխադրուած է 14 վակոն վառելանիւթ եւ հինգ վակոն պարարտանիւթ: Տարր, տարանցումի նոյն ուղիով Հայաստան փոխադրուած է աւելի քան 36 հազար թոն ցորեն, ուր հազար թոն պարարտանիւթ, ինչպէս նաեւ ալիւր, վառելանիւթ եւ այլ նիւթեր:

ՂԱՏԱԿԻՈՆԵՐՆ ԱԼ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՒՄԸ ԵՆ

Պաքուի մէջ գերեզմարուած եւ քան տարուայ բանտարկութեան դատապարտուած՝ Արցախի պետական նախկին նախարար եւ ծանօթ բարերար Ռուբէն Վարդանեանի պաշտպան Սիրանուշ Սահակեան յայտնեց, որ կը պատրաստուին դիմելու Մարդկային իրաւունքներու եւրոպական դատարան, նկատի առնելով որ վերջապէս յաջողած են ստանալ Վարդանեանին դատավճիռը: «Պիտի ապացուցենք, որ Վարդանեանին մեղադրանքը քաղաքական է, անհատական որեւէ յանցանոր արարք չկայ: Հաւաքական ինքնորոշումի իրաւունքը ապօրինաբար որակաւորուած է որպէս ահաբեկչութիւն», ահազանգեց ան: Իրաւաբանը նշեց, որ Ատրպէյճանի մէջ բանտարկուած մնացեալ 15 հայ գերիներուն պարագային, Պաքուի իշխանութիւնները տալիս կը մերժեն տրամադրել ուր ամիս առաջ արձակուած դատավճիռները, ուստի իրաւաբանները կարողութիւն չունին ծանօթանալու մանրամասնութիւններուն եւ անոնց հիման վրայ բողոք ներկայացնելու Մարդկային իրաւունք-



ներու եւրոպական դատարանին: Յիշեցնենք, որ ցկեանս կամ երկարատեւ բանտարկութեան դատապարտուած են 16 հայ գերիներ՝ ներառեալ Ռուբէն Վարդանեանն ու Արցախի ռազմաքաղաքական ղեկավարները:

Ատրպէյճանի նախագահ Իլիհամ Ալիեւ ընդունեց թրքական անօդաչու սարքերու արտադրութեամբ հռչակ ստացած Baykar ընկերութեան նախագահ Սելւուք Պայրաքթարը, որուն հետ քննարկեց համագործակցութիւնը խթանելու միջոցները եւ հեռանկարները: Պայրաքթար Ալիեւին ներկայացուց Ատրպէյճանի մէջ ընկերութեան իրականացուցած աշխատանքները, մաղթելով որ Պաքուի հետ իրենց միասնութիւնն ու եղբայրութիւնը ըլլայ յաւերժ:

ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԿԱԼԱՆԵՒԻ ԵՐԿԱՐԱԶՈՒՄ

Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններուն մասնակցած եւ երկրորդ դիրքը գրուած «Ուժեղ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Սամուէլ Կարապետեանի տալիս կալանքի երկարաձգուած է: Դատական նիստին



աւարտին, դատաւորը որոշեց կալանքը երկու ամիս երկարաձգել, թէւ մեղադրող կողմը կը պահանջէ եռամսեայ կալանք:

ՀԱՅ-ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՅՈՒՄ

Հայաստանի արտաքին գործերու փոխնախարար Վահան Կոստանեան Լիբանան կատարած իր այցելութեան ընթացքին տեսակցեցաւ նախագահի աշխատակազմի տնօրէն Անթուան Շուքէյրի հետ: Վերջինս շնորհակալութիւն յայտնեց Հայաստանի կառավարութեան՝ Լիբանանին ցուցաբերուած շարունակական աջակցութեան համար, ներառեալ մարդասիրական օգնութիւն տրամադրելու որոշումը: Ըստ Արտաքին գործերու նախարարութեան իրապարակած յայտարար-



ութեան, Կոստանեան իր կարգին վերահաստատած է Երեւանի յանձնառութիւնը՝ շարունակելու աջակցիլ բարեկամ Լիբանանին՝ նպաստելով երկրին մէջ առկայ մարդասիրական ճգնաժամի մեղմացումին: Զրուցակիցները անդրադարձած են նաեւ Երեւանի եւ Պէյրութի միջեւ համագործակցութեան զարգացումին՝ ներառեալ անհրաժեշտ իրաւապայմանագրային հիմքերու ձեւաւորումը:

ԶԱՅՆԵՐ ՊՈԼՍԷՆ

(արձագանգ թրքահայ կեանքի) - 2



ՊՈԼՍՅՈՒՆ «Ալթաս» շարժական սրահին մէջ, 4 Յունիսին, համայնքային ու հանրային մակարդակով մեծարանքի հանդիսութիւն մը կայացած է ի պատիւ ասմունքի անգուգական վարպետ ու պոլսահայ բեմերու երկարամեայ զարդ տիկ. Սիլվա Կոմիկեանի: Զեռնարկը միասնաբար կազմակերպած են Հայոց պատրիարքարանն ու Թուրքիոյ Մշակոյթի եւ Զբօսաշրջութեան նախարարութիւնը, սակայն գործնականօրէն՝ կազմակերպչական աշխատանքները ծրագրած ու վերահսկած են Կոմիկեանի մօտիկ համակիրները: Բացման խօսք արտասանած է երեկոյթին հանդիսավար՝ Թամար Մանկասարեան: Նախ ցուցադրուած է տեսերձ մը, ուր գրոյց մը կը կատարուէր մեծարեալին հետ՝ իր կենսագրութեան մասին: Հայկական տարբեր վարժարաններէ մեծաթիւ ուսանողներ կատարած են արեւմտահայ կամ իսթանպուլահայ բանաստեղծներէ արտասանութիւններ, իսկ չափահաս արուեստագետներ հրամցուցած են հայերէն երգեր, երաժիշտներու ընկերակցութեամբ: Չեղարուեստական այս երկարաշունչ յայտագրի աւարտին բեմ բարձրացած է Սիլվա Կոմիկեան, որ ասմունքած է երանաշնորհ Վազգէն Ա. կաթողիկոսին հայ ժողովուրդին ուղղած մէկ պատգամը, որ խորապէս յուզած է ներկաները: Հուսկ բանքը արտասանած է Սահակ պատրիարք, որ նկատել տուած է թէ մեծարեալը թէւ բանաստեղծութիւն չէ գրած, սակայն մեծապէս սատարած է բանաստեղծներու եւ արձակագիրներու գրութեանց կենդանացումին ու տարածման: Նշենք, որ յիսուն տարիէ իվեր Սիլվա Կոմիկեան անհամար անգամներ բեմ բարձրացած է Պոլսոյ ու արտասահմանի մէջ եւ միշտ ալ յաջողած է կախարդել իր ունկնդիրները: Ան կողակիցն էր մօտիկ անցեալի իսթանպուլահայ գրականութեան յայտնի արձակագիրներէն տողթ. Վարդան Կոմիկեանի:

(Շարունակութիւնը տեսնել էջ 2)

ԸԽՅ ԹԵՐԹԸ
ԸՆԿԵՐՆ Է
ԸԽՅ ՏԱՆ

«ՄԱՍԻԱ» - ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

ԺԱՄԱՆԱԿՆ Է ՈՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՓՈԽԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԵՊ ԻՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՔԸ


Ռուսաստան կը շարունակէ հայկական ապրանքներու ու յատկապէս գիւղատնտեսական արտադրանքներու սահմանափակումները, որոնք դրուած էին Յունիս 7-ի խորհրդարանական ընտրութիւններէն անմիջապէս առաջ, նպատակ ունենալով ազդել ընտրութիւններու արդիւնքներուն վրայ՝ յուսալով տապալել Փաշինեանի իշխանութիւնը ու Երեւանի մէջ տեսնել իրեն ենթարկուելու պատրաստ Նոր կառավարութիւն:

Ընտրութիւններէն անցած է մէկ ամիս եւ Ռուսաստանի նախագահը տակաւին կը մերժէ շնորհաւորել Փաշինեանը ու տնտեսական պատժամիջոցները կը շարունակեն մնալ ուժի մէջ:

Միւս կողմէ, Հայաստանին ձեռք մեկնեց Եւրոպական միութիւնը՝ նիւթական ու գործնական աջակցութիւն ցուցաբերելով, որպէսզի սահմանափակումներու տակ գտնուող ապրանքները հասնին 450 միլիոն բնակչութիւն ունեցող Եւրոպական շուկաներ: Անցեալ շաբաթ, այս նպատակով Երեւան այցելած՝ Եւրոպական յանձնաժողովի նախագահ Ռոսոլա վոն տեր Լայնէ յայտարարեց, որ Պրիւքսելը պիտի ազատականացնէ դէպի Եւրոմիութեան շուկաներ Հայաստանի արտահանումներու շուրջ 80%-ը եւ պիտի տրամադրէ ֆինանսական փաթեթներ՝ օգնելով Երեւանին բազմազանեցնել իր տնտեսութիւնը եւ դիմակայել Մոսկուայի կողմէ ածող ճնշումներուն: «Եթէ Ռուսաստանը փակէ իր շուկան հայկական արտադրանքին համար, ԵՄ-ն պիտի բանայ իր դռները», շեշտեց եւրոպացի բարձրաստիճան դիւանագետը:

Եւրոպական այս անմիջական ու արագ նախաձեռնութիւնը՝ օգնութեան հասնելու Հայաստանին, վրիպած պէտք չէ ըլլայ Մոսկուայի ուշադրութենէն: Վերջին օրերուն նկատելիօրէն նուազած են Քրեմլինի խօսնակներուն կողմէ Երեւանի հասցէին հնչող մեղադրանքներն ու սպառնալիքները: Իսկ Հայաստանի կառավարութեան ղեկավարը մեկնած էր Ռուսաստան՝ մասնակցելու միջազգային արդիւնաբերական ցուցահանդէսի մը: Այս առթիւ ռուս վարչապետ Միխայիլ Միշուսթին յայտարարեց. «Ռուսաստանի Դաշնութիւնը պատրաստակամ է հետեւողականօրէն զարգացնելու յարաբերութիւնները Հայաստանի հետ Յունիս 7-ին կայա-

ցած խորհրդարանական ընտրութիւններէն յետոյ, երբ Երեւանի մէջ պիտի ձեւաւորուի Նոր կառավարութիւն»: Տրամաբանութիւնը կը յուշէ, որ այս յայտարարութեան պիտի յաջորդէ տնտեսական սահմանափակումներու աստիճանաբար մեղմացումը: Նման քայլ առաջին հերթին կը բխի Ռուսաստանի շահերէն: Հայաստանի տնտեսվարողներ



սկզբնական շրջանին որոշ դժուարութիւններէ ետք, ի վերջոյ պիտի կարողանան գտնել այլ շուկաներ: Նոյնը պատահեցաւ 44-օրեայ պատերազմէն ետք, երբ Ռուսաստան մերժեց գէնը մատակարարել Հայաստանին ու բանակը սկսաւ զինուիլ այլ երկիրներու արդիական եւ աւելի որակաւոր զինատեսակներով ու զարկ տալ Ներքին արտադրութեան, որոնք անցնող Մայիս 28-ին տողանցեցին Հանրապետութեան հրապարակին վրայ: Մոսկուան նաեւ կորսնցուց իր քաղաքական ազդեցութիւնը Երեւանի վրայ, երբ ան, առեւտուրի մէջ մտնելով Պաքիստանի եւ Անքարայի հետ, նպաստեց Արցախի հայաթափման: Այս վերջին քայլով Քրեմլին գործեց պատմական անդառնալի մեծ սխալ, կորսնցնելով Հայաստանը, առանց սիրաշահելու Ատրպէյճանը, իսկ Թուրքիան դարձաւ զխաւոր դերակատար Հարաւային Կովկասի մէջ, որուն համար հարկւրամեակներու թշնամանք գոյութիւն ունեցած է Ռուսաստանի եւ Թուրքիոյ միջեւ:

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ 88

Ձ	Ի	Կ	Ա	Գ	Ն	Ա	Չ	Հ	Ր	Ի	Ի	Ձ	Ղ	Ե	Ե	Ղ	Ի	Ն	Ձ
Ա	Ի	Տ	Դ	Ն	Դ	Ե	Ր	Ք	Ա	Ձ	Ն	Ր	Ե	Ր	Կ	Ո	Ի	Ն	Ք
Յ	Ծ	Ն	Ա	Ն	Ա	Խ	Ա	Ն	Ո	Ի	Ա	Գ	Ա	Ր	Ա	Ն	Յ	Մ	Յ
Լ	Ի	Ր	Ե	Ճ	Ն	Ե	Ճ	Ա	Ո	Բ	Ա	Ն	Ա	Ր	Մ	Ո	Ի	Կ	Ա
Չ	Գ	Ա	Ս	Տ	Ր	Ա	Կ	Մ	Մ	Ղ	Ե	Տ	Ա	Ի	Մ	Ո	Ս	Ե	Ղ
Ձ	Ա	Ր	Դ	Ա	Ր	Ա	Ր	Ա	Ո	Լ	Ր	Ո	Ա	Ն	Չ	Ո	Ի	Կ	Ա
Լ	Խ	Ն	Ն	Տ	Ռ	Մ	Ճ	Գ	Ի	Յ	Ա	Կ	Ա	Ր	Ա	Յ	Ե	Կ	Ձ
Ա	Ա	Ո	Ա	Ն	Ա	Չ	Ա	Ն	Ա	Չ	Ն	Ո	Ա	Դ	Մ	Ղ	Լ	Ա	Կ
Տ	Ն	Ր	Ռ	Չ	Ճ	Ա	Ի	Ա	Գ	Ր	Ա	Բ	Ն	Ա	Կ	Ա	Ր	Ա	Ն
Ո	Հ	Ա	Ե	Ր	Ա	Ճ	Ա	Հ	Ա	Տ	Մ	Ո	Ն	Տ	Կ	Ն	Գ	Պ	Կ
Ի	Ր	Հ	Մ	Ա	Ք	Ն	Չ	Ա	Կ	Ա	Տ	Վ	Ե	Ա	Կ	Ա	Մ	Ի	Դ
Մ	Ո	Ա	Ր	Հ	Ն	Մ	Ա	Ր	Հ	Տ	Ե	Պ	Ր	Ա	Կ	Լ	Տ	Կ	Ր
Չ	Ի	Ս	Ե	Ե	Ա	Լ	Ն	Կ	Ե	Դ	Ր	Ո	Ն	Ա	Կ	Ա	Ն	Ա	Ա
Ն	Շ	Ո	Ձ	Չ	Ր	Մ	Ե	Ա	Ր	Ա	Ի	Շ	Յ	Ր	Հ	Ո	Ն	Ր	Ն
Ա	Ա	Մ	Ր	Գ	Ս	Ռ	Ա	Դ	Կ	Ա	Մ	Ա	Կ	Ա	Տ	Ա	Ր	Ի	Դ
Ճ	Կ	Ի	Յ	Ե	Ա	Կ	Ր	Ր	Դ	Ր	Ո	Յ	Կ	Ի	Ո	Ղ	Ե	Հ	Հ
Ա	Ա	Ո	Ա	Ս	Բ	Ա	Դ	Ա	Ա	Ո	Ա	Ա	Ա	Յ	Ա	Ս	Մ	Ի	Կ
Ճ	Ռ	Շ	Ե	Տ	Կ	Չ	Ա	Ն	Յ	Տ	Հ	Տ	Ր	Ի	Ի	Բ	Ո	Ի	Թ
Ա	Ն	Ն	Ա	Ա	Է	Ճ	Ր	Ք	Ի	Բ	Ո	Ր	Ա	Կ	Ա	Ծ	Ի	Ն	Կ
Թ	Ի	Ճ	Ն	Կ	Ի	Ր	Ա	Պ	Ա	Կ	Շ	Ի	Ո	Յ	Ո	Ի	Ռ	Թ	Ի

ԱԿԱՌՆ (2)
ԱԿԱՏ (2)
ԱՆՁՈՒԿ
ԱՊԻԿԱՐ
ԱՌՈՅԳ
ԱՐԴԱՐ
ԱՐՄՈՒԿ
ԱԲԱՁԱՆ

ԲԱՍՐԱՆՔ
ԲԱՐԳԱԲԱՏ
ԲԵՐՈՒՄ
ԲԻՒՐ
ԲՆԱԿԱՆ
ԲՆԱԿԱՐԱՆ

ԲՈԿՈՆՆ
ԲՈՐԱԿԱԾԻՆ
ԲՈՎ
ԲՈՒԹ

ԴԱՏ
ԴԻՄԱԿ
ԴՆԴԵՐ
ԴՐԱԿԱՆ
ԴՐԱՆԴ

ԵՂԻՆՉ
ԵՂՁԻՐ
ԵՐԱՆԵԼԻ
ԵՐԿՈՒՆՔ

ԵՐԿՐԱՑԻ
ԵԻՄ

ՋԱՆԱՁԱՆ
ՋԱՆԱՁԱՆԱԿ
ՋԱՆԳԱԿ
ՋԳԱՍՏ
ՋՐԱՅԱԶԳԵՍՏ

ԿԱՍԱԿԱՍԱՐ
ԿԱՐՊԵՏ (2)
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ԿԵՌԱՍԵՆԻ
ԿՆՃԻԹ
ԿՈՏԱԿ

ԿՈՐԵԿ
ԿՑՈՐԴ

ՀԱՍԱՐԱՏՈՒ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
ՀԱՆԳԱՄԱՆՔ
ՀԱՐԿԱԴՐԱՆՔ
ՀԱՑԱՀԱՏԻԿ
ՀԱԲԱՏԱՐՄԱԳԻՐ

ՀԵՂՈՒԿ
ՀՈՐԴԵԼ
ՀՐԵՇ
ՀՐՈՒՇԱԿ

ՃԱՃԱՆՉ

ԽԱԶԲԱՌ ԹԻՒ 86-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Հ	Ա	Մ	Ա	Կ	Ա	Ր	Ծ	Ի	Ք
2	Ա	Լ	Ի		Ա	Ր		Օ	Ի	Ա
3	Ն	Ք		Կ	Ր	Ի	Լ		Ղ	Ղ
4	Գ		Ս		Օ	Շ	Ի	Ն		Ա
5	Ս	Ա	Պ	Ա	Տ		Մ	Ա	Ր	Ք
6	Տ	Տ	Ի	Պ		Կ	Ա	Ս	Ի	Ա
7	Ա		Տ	Ա	Ն	Ա		Ք		Մ
8	Ի	Ց		Տ	Ո	Մ	Ս		Ն	Ա
9	Է	Ն	Դ		Յ	Ի		Ի	Ղ	Յ
10	Տ	Ա	Ղ	Ա	Ն	Դ	Ա	Ի	Ո	Ր

- ԽԱԴԻՆ ՕՐԵՆՔԸ.
- Բառերը կրնան կարդացուիլ տարբեր ուղղութեամբ՝ հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղակի:
 - Միեւնոյն տառը կրնայ գործածուիլ մէկէ աւելի բառերու մէջ:
 - Դիւրութեան համար սկսիլ երկար բառերը գտնելով:

Պահուած բառը (6 տառով)՝ ՄԱՆՐ ԲԱԿԼԱՅ

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ ԹԻՒ 87-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՃՕՃԱՆԱԿ

Պահուած բառին եւ խաչբառին պատասխանները տեսնել խաղերու յաջորդ թիւով

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ (ԱՄՆ)

Այս իրադարձութիւններու լոյսին տակ է, որ Երեւան իր ուշադրութիւն թեքեց դէպի Արեւմուտք՝ սերտացնելով իր յարաբերութիւնները Եւրոպային հետ, ու այսօր կը քաղէ այդ քայլին պտուղները՝ տնտեսապէս ու քաղաքականապէս:

Որքան որ Հայաստանը պէտք ունի Ռուսաստանին, Նոյնքան ալ Ռուսաստանը՝ Հայաստանին, որպէսզի կարողանայ որոշ չափով պահել իր ներկայութիւնը տարածաշրջանէն ներս: Այդ ընելու համար, Մոսկուան պէտք է դադրի սպառնալիքներու եւ պատժամիջոցներու լեզուով խօսելէ Երեւանի հետ: Վարչապետ Փաշինեան ու կառավարութեան միւս անդամները գիտակցաբար չեն պատասխաներ ռուս ներկայացուցիչներու հակահայ ելոյթներուն, իրավիճակը աւելի չսրելու համար, եւ ընդհակառակը միշտ կը շեշտեն Ռուսաստանի հետ կապերու կարեւորութիւնը: Ժամանակը եկած է, որ Մոսկուան վերադառնալիք իր յարաբերութիւնները Հայաստանի հետ ու որդեգրէ ամբողջովին Նոր քաղաքականութիւն՝ իմաստաւոր փոխադարձ յարգանքի ու ինքնիշխանութեան սկզբունքին վրայ:

ԽԱԶԲԱՌ 87

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ

- 1) Դրդապատճառ, սկզբնապատճառ:
- 2) Յետանէ՝ – Ածականակերտ մասնիկ – Սպասէ՛:
- 3) Կրկնուած բաղաձայններ – Ափսո՛ւս – Որովհետեւ (հակ.):
- 4) Ետին դարձած՝ շողոքորթէ՛:
- 5) Կտրիճ, անվեհեր – Կիլիկեան մաւահանգիստ (հակ.):
- 6) Դէմք – Մադիամի սպաննուած թագաւորներէն:
- 7) Քոլոմպոսի ծովագնացութեան երեք մաւերէն մէկը:
- 8) Եական բայ – Տապալի – Կրկնուած ծայնաւորներ:
- 9) Արական անուն – Շաղկապ – Վահան Թեքեանի երկերէն:
- 10) Յարմարանք:

ՈՒՂԱՅԱՅԵԱՑ

- 1) Տան բաժանումներէն:
- 2) Մշակուած հող – Նոյն գիրերը – Շրջ՝ ծառի կոճը:
- 3) Այբուբենէն – Ժամանակ – Սարսափ:
- 4) Նիհար, վտիտ:
- 5) Քերթող, բանաստեղծ – Նմանապէս:
- 6) Կարող – Շրջ՝ եկեղեցականի ուսանող:
- 7) Թռչուն որսալու մածոյց (հակ.):
- 8) Իրերայաջորդ տառեր – Երկսայրիի տապար – Ցուցական ածական:
- 9) Լիբանանահայ ասմունքող – Ո՛ւր – Ասիական դրամանիշ:
- 10) Ռազմապաշար, զինապահեստ:

ՀՆՁԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Շարունակում էջ 2-էն

իրենց գաղափարախօսությունը կենդանի և շարունակելի է: Անոնց անձնագծությունը կը շարունակէ ներշնչել նոր սերունդները՝ հաւատարիմ մնալու ազգային արժէքներուն եւ անխոնջ շարունակելու պայքարը յանուն ազատ, անկախ եւ ամբողջական հայրենիքի: Աւելին, սոյն զոհաբերությունը կը վերահաստատէ հաւատարմությունը ազգային արժէքներու, պատմական յիշողութեան պահպանման եւ սերունդէ-սերունդ փոխանցուող ազատասիրական ոգիին նկատմամբ:

Մեր Պարգէն Դաւիթեան Զսաններու կախաղանումը հնչակեան ղեկավարներու դէմ լոյս դատարանի վճիռի մը գործադրությունը չստացաւ, այլ խորհրդանշական արարք մը՝ պատժելու ամբողջ հայ ազգը: Ան ըսաւ. «Օսմանեան կայսրութեան մօտաւորապէս 500 տարուան իշխանութեան ընթացքին միլիոնաւոր ազատատենչ մարդիկ բարբարոսաբար սպաննուած են: Սակայն ըստ Ուիլիսիոսի համացանցային համայնագիտարանին ուղղած հարցումիս, թէ այդ երկար շրջանին քանի՞ անգամ հաւաքական կախաղան հանուած մարդոց (mass hanging) դէպքեր պատահած են, պատասխան տրուեցաւ, թէ երբեք անգամ այդ պատահած է. Պոլսոյ Յոյներու պատրիարք Կրեկորի 5-րդը եւ չորս յոյն արքեպիսկոպոս ու 6 յոյն եպիսկոպոս՝ 15 Յունիս 1821-ին, հնչակեան Զսան կախաղանները՝ 15 Յունիս 1915-ին, լիբանանցի եւ սուրիացի 14 ազատամարտիկ ազգային ղեկավարներ՝ 6 Մայիս 1916-ին: Երեք պարագաներուն ալ, հաւաքական ընտել ունեցող նահատակութեամբ թուրքը ուզած է անոնց ժողովուրդներուն տալ պատժելու խորհրդանշական իմաստ: Առաջին պարագային՝ 1821 թուականի յունական ապստամբութեան ոգին պատժելու համար Պոլսոյ մէջ կախաղան բարձրացուեցան Պոլսոյ յոյն պատրիարքն ու թիւով տասը յոյն արքեպիսկոպոսներ եւ եպիսկոպոսներ, 1915 թուականին հայ ազատագրական ոգին պատժելու համար Պոլսոյ մէջ կախաղան հանուեցան հնչակեան Զսանները, եւ 1916 թուականին արաբ ազատագրական ոգին պատժելու համար Պէյրութի եւ Դամասկոսի մէջ կախաղան հանուեցան 14 ազգային ղեկավար մարդիկ: Երեք պարագաներն ալ կը խորհրդանշեն ամբողջ ժողովուրդ մը պատժելու նպատակ մը Օսմանեան կայսրութեան կողմէ:»

Հանդիսությունը եզակի առիթ մըն էր վերարժեւորելու Զսաններուն հայրենասիրությունն ու ազգասիրությունը, աննկուն կամքը, ինչպէս նաեւ անդադառնալու այն պատմական իրադարձություններուն, որոնք կերտեցին մեր ազգային ազատագրական յաղթական պայքարի էջերը: Երեկոյն փակուեցաւ ընկ. Փանոս Անուշեանի «Ողջոյն քեզ, Հնչակ», «Փառք Հնչակին», «Հնչակեան ենք մենք» եւ «Ուխտի հրաւեր» ջերմ, յուզիչ եւ խանդավառող երգերու կատարողութեամբ: Ապա տեղի ունեցաւ կոկիկ եւ պատշաճ հիւրասիրություն, որ առիթ ընծայեց ներկաներուն միասին վայելելու ջերմ գրոյցի ու հաղորդակցութեան պահեր: Ներկաները խոնարհուով ու երախտագիտութեան տուրք մատուցեցին Զսաններուն եւ բոլոր հայ հերոսներուն, որոնք նահատակուեցան ազգային ազատագրական պայքարի ճանապարհին: 111 տարի ետք ուխտի խորոգման օրը կրկին կը յիշատակուի եւ մասնակիցները իրենց ազգային վեհ գիտակցութեամբ անգամ մը եւս կը նշեն մահափայտերուն վրայ կախաղանուած Զսաններուն անմեղ յիշատակը:

Այս դժուար պահերուն, մեր Դարմանատունը կը շարունակէ կարիքաւորին կողքին կանգնիլ: Այսօր մենք ձեր աջակցութեան պէտք ունինք՝ մեր առաքելությունը շարունակելու համար:



Կրկն ֆոնդատուութիւն կատարել
Whish հաշիւով եւ օգնել մեզի որպէսզի շարունակենք խնամք եւ անհրաժեշտ ծառայությունները մատուցելու մեր գաղութին:



Իրաքանչիւր ներդրում, ինչքան ալ փոքր ըլլայ, նպատակին կը ծառայէ:



Միասին կրնանք յոյսը վառ պահել:



71/356035

Շնորհակալութիւն Ձեր աջ նուրբեան եւ օժանդակութեան համար:
Միասին անելի գործեր ենք:

www.araraddaily.com

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradartert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية
تصدر عن شركة ماسيس للمطباعة والنشر (ش.م.م.)

«ԱՄԱՌ ԱՌԱՆՅ ԱՅԳԱԲԱՅԻ»

Շարունակում էջ 2-էն

պան Մորկընթաուի տեսակցությունը Թալաթի հետ, յայտնելու համար իր վրդովմունքը հայոց դէմ կատարուած վայրագություններուն եւ անարդարություններուն նկատմամբ:

Գրող-պատմաբան Յակոբ Խաչիկեան եւ վիպագիր Ժան-Իվ Սուսի կը նկարագրեն Սեբաստիա քաղաքը, որուն արուարձաններէն մէկուն մէջ բաւող զինուորական հիւանդանոցին մէջ Վարդան Պալեանը բժիշկ սպայ էր: 1915-ի ամռան սկիզբը Սեբաստիոյ հայոց բռնագաղթի հրամանը եկած էր: Օսմանեան բանակին մէջ Վարդանի ծառայութեան պատճառով, անոր ընտանիքը պէտք է գերծ մնար տեղահանուել: Այդուհանդերձ, 38 տարեկան Վարդանը միշտ զգոյշ էր այս հարցին նկատմամբ:

Վարդանի հայրը՝ Թովմաս Պալեան ափիոնի արտեր ունէր Սեբաստիոյ մէջ եւ դէպի Եւրոպա ու Ամերիկա ափիոն կ'արտածէր, բժշկական նպատակներով գործածուելու համար:

Վարդան Պալեանի հոգեբանութեան վրայ մեծապէս ազդած էին 1894-1896-ի հայոց ջարդերը եւ քաղաքականությունը դարձուցած իր նախասիրությունը: Երիտասարդ տարիքին ան քաղաքական վերլուծություններ կ'ընէր ու թերթերու մէջ կը հրատարակէր: Հայրը՝ Թովմաս կը փափաքէր որ Վարդան քիմիագետ դեղագործ դառնար, օգտակար ըլլալու համար իրենց ափիոնի գործին: Սակայն վերջինս կ'ուզէր պատմագիտութեան հետեւիլ: Բուռն վիճաբանություններէ ետք Վարդան ստիպուած կ'ենթարկուի հօրը կամքին եւ Պոլսոյ հայկական Կեդրոնական վարժարանը աւարտելէ ետք Ռոպերթ Գոլէ կը մտնէ դեղագործութեան հետեւելու:

Վարդան Պալեան Կ. Պոլսոյ մէջ իր մօրեղբօր՝ Մեսրոպ Մեսրոպեանի տունը կը մնար: Մեսրոպի աւագ որդին՝ Պարգեւը Նիւ Եորք կ'ապրէր եւ Պալեաններու ափիոնի տեղւոյն գրասենեակը կը ղեկավարէր: Կրտսեր որդին՝ Տիրանը Վարդանի հետ շատ մտերմացած էր եւ անոր նման քաղաքական հակումներ ունէր, այն տարբերութեամբ որ Տիրան զինեալ պայքարի ջատագով էր, իսկ Վարդան սահմանադրական բարեփոխումներու կը հաւատար, եւ որ քսան տարեկան երիտասարդ էր երբ իր յօդուածները սկսած էին հրատարակուիլ արտասահմանի մէջ: Ան վերլուծական գիրք մը կը հրատարակէ՝ «Ազգերու կայսրություն» խորագիրով: Երիտթուրքերը կասկածով կը նայէին անոր ու Վարդան կը ստիպուի մէկ տարի իր ընկերներուն մօտ թաքնուած կեանք մը ապրիլ, յաճախ փոխելով հասցեն:

(Շարունակելի)



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ օրերուն պիտի կայանայ Հ.Մ.Մ. Պէյրութի հերթական Ընդհանուր Անդամական ժողովը, որուն ընթացքին պիտի ընտրուի նոր Վարչութիւն:

Առ այդ, կը թելադրուի Հ.Մ.Մ. Պէյրութի անդամներէն ճշդելու իրենց անդամակցութեան իրավիճակը եւ կատարելու իրենց նիւթաբարոյական պարտաւորությունը ամենաուշը մինչեւ Չորեքշաբթի, 15 Յուլիս 2026:

Հ.Մ.Մ. Պէյրութի Վարչութիւն



VARTAVAR Festival

DATE | **26 JULY 2026**

TIME | **10:00 AM**

LOCATION | **MAR MIKHAEL NOR HAJEN STREET**

Water. Laughter. Together.
LET'S MAKE MEMORIES!



Հեծանիւ

ԴԵՂԻՆ ՇԱՊԻԿԸ՝ ԴԱՐՁԵԱԼ ՓՈԿԱՉԱՐԻՆ

Թատէյ Փոկաչար 2026-ի «Թուր Տը Ֆրանս»-ի ամենատպաւորիչ ելոյթը կատարեց՝ յաղթելով 6-րդ փուլը, որ կ'երկարէր Փօ-Էն դէպի Կավարնիէ-ժետր: «UAE Team Emirates-XRG»-ի առաջատարը լեռնային վճռական յարձակմամբ մը վերատիրացաւ դեղին շապիկին եւ զգալի տարբերությունն ստեղծեց իր գլխաւոր մրցակիցներուն նկատմամբ: Եռնաս Վինկէկարտ երկրորդը հասաւ աւարտական գիծ, իսկ Իսահակ Տէլ Թորո երրորդ տեղը գրաւեց:



6-րդ փուլ - Առաջին հնգեակը

- 1) Թատէյ Փոկաչար (Էմիրէյթս-XRG)
- 2) Եռնաս Վինկէկարտ (Վիսմա-Լիս) +2:38
- 3) Իսահակ Տէլ Թորո (Էմիրէյթս -XRG) +2:57
- 4) Ռեմքօ Էվընսփոյլ (Ռեւո Պոլ-Պորա-հանկակրոհէ) +2:57
- 5) Փօլ Սեքսա (Տէքաթոն CMA-CGM) +2:57

Ընդհանուր դասաւորում - 6-րդ փուլէն ետք

Թատէյ Փոկաչար
Եռնաս Վինկէկարտ (+2:42)
Իսահակ Տէլ Թորո (+3:27)
Ռեմքօ Էվընսփոյլ
Խուան Այուսօ

Այս փուլը զգալիօրէն փոխեց ընդհանուր պատկերը, քանի որ Փոկաչար վերահաստատեց իր գերիշխանությունը՝ տիրանալով թէ՛ դեղին շապիկին եւ թէ՛ լեռնային դասաւորման առաջատարի դիրքին, մինչ նախկին առաջատար Թորթէյն Թրէն դժուար օր մը ապրեցաւ Փիրենէներու մէջ եւ զգալի ժամանակ կորսնցուց:

Թենիս

2026-Ի ՌԻԻՄՊԸԼՏԸՆԻ ՎԵՐՋԻՆ ՓՈԽԼԵՐԸ

2026-ի Ռիմպըլտընի ախոյեանությունը հասած է իր վերջին փուլերուն՝ «All England Club»-ի մէջ բերելով յիշարժան պահեր եւ պատմական ծեռքերու մտքներ:

Կանանց մենախաղին մէջ, Ռիմպըլտընը առաջին անգամ պիտի ունենայ չեմպիոնայնուի մը. Զարոլինա Մուխոնկա եւ Լիստա Նոքըվա եզրափակիչ հասնելէն ետք, կիսաեզրափակիչներուն տպաւորիչ յաղթանակներ արձանագրելով Զոքո Կաուֆի եւ Մարթա Զոսթիւքի դէմ:



Տղամարդոց զուգախաղին մէջ, եզրափակիչի մասնակիցները արդէն որոշուած են. Մարսելօ Արեալօ եւ Մաթէ Փաւիչ պիտի մրցին Հարի Յելիովաարայի եւ Հենրի Փաթընի դէմ՝ Ռիմպըլտընի տիտղոսին համար:

Իսկ խառն զուգախաղի տիտղոսը արդէն որոշուած է. Ժելենա Օստափենքօ եւ Մարսելօ Արեալօ նուաճեցին բաժակը՝ սքանչելի վերադարձով մը յաղթելով Սթոքմ Հանթըր եւ Մարք Փոլմընս զոյգին:

Ընթերցանարար

ՍԱՄՈՒԷԼ ՏԵՐՏԵՐԵԱՆ՝ «Մ20»-Ի ԵԻՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԱՆ

2026-ի մինչեւ 20 տարեկաններու Եւրոպայի Յունահռոմէական ընթերցանարարի ախոյանությունը աւարտեցաւ 8 Յուլիսին, Սքոթիէի մէջ:

Հայաստան աւարտեց մրցաշարը երկրորդ դիրքի վրայ՝ հաւաքելով 126 միաւոր եւ նուաճելով 1 ոսկի, 2 արծաթ եւ 1 պրոնզէ մետալ:

Հայ ըմբիշ Սամուէլ Տերտերեան դարձաւ Եւրոպայի ախոյան՝ 77 քկ քաշային դասակարգին մէջ, եզրափակիչին յաղթելով ատրալէ-ճանցի ըմբիշ Ժաւիտան Նախմաթովին: Իսկ 87 քկ քաշային դասակարգին մէջ Եւրոպի Պետրոսեան նուաճեց պրոնզէ մետալ:

Հայաստանի երկու արծաթէ մետալները ապահովեցին Ալեքս Մարգարեան՝ 63 քկ քաշային դասակարգին, եւ Ետգար Պետրոսեան՝ 55 քկ քաշային դասակարգին մէջ:



Պատրաստեց՝ ՄՈՒՐԱՏ Մ.